ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.09.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/150

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Գ. Փոքրիկյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական N 03Ա1035189)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.09.2019թ. թիվ 26/26-1/14672-2019 գրությամբ «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 02.09.2019թ. թիվ 02/16.4/5128-2019 գրության հիման վրա, 03.09.2019թ. թիվ 26/26-1/14672-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/150 ընթացակարգի շրջանակներում 09.09.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ 27.08.2019թ. ստացել է ծանուցում անհամապատասխանությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու վերաբերյալ, սակայն 28.08.2019թ. էլեկտրոնային ստորագրության խնդրի առկայության պատճառով, Ընկերությունը հնարավորություն չի ունեցել շտկելու անհամապատասխանությունը: Միևնույն ժամանակ Ընկերությունը մինչև հայտը մերժելու մասի որոշումը ստանալը՝ գնահատող հանձնաժողովին ուղարկել է անհամապատասխանության շտկված տարբերակը:

3. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.09.2019թ. թիվ 02/16.4/5128-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2019 թվականի օգոստոսի 13-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/14» ծածկագրով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ն: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է՝ արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/150 ընթացակարգի շրջանակներում 09.09.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/150 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/150 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2019թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտում արձանագրվել է անհամապատաս-խանություն:

Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում չի շտկվել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.09.2019թ. թիվ 26/26-1/14672-2019 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 02.09.2019թ. թիվ 02/16.4/5128-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.4 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Միևնույն ժամանակ, Ընթացակարգի հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանվել է պայմանագրի կատարման համար համապատասխան որակավորում ունեցող առնվազն 9 աշխատակիցների պահանջ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2019թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտում արձանագրվել է անհամապատասխանություն. Ընկերության կողմից ներկայացված Հավելված N 1-ի 3-րդ կետում նշված է, որ պայմանագրի կատարումն իրականացվելու է թվով 7 աշխատակիցների միջոցով՝ հրավերով պահանջվող նվազագույնը 9 աշխատակիցների փոխարեն:

Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում չի շտկվել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 64-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով. հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով

ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին՝ նշելով աշխատակիցների թիվը, որոնց միջոցով մասնակիցը պետք է ապահովի պայմանագրի կատարումը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ն Ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, և առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել հրավերով նախատեսված հայտի N 1 հավելվածի շտկված տարբերակն աշխատակիցների թվի մասով, կամ որևէ այլ հիմնավորում հայտի N 1 հավելվածում նշված աշխատակիցների թվով հրավերով նախատեսված աշխատանքների կատարման հնարավորության վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.09.2019թ. թիվ 26/26-1/14672-2019 գրությամբ «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**